ԱՐՏԱԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՄԱՂԱԼՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 06.12.1977
Ծննդավայրը՝ ՀՀ, քաղաք Երևան:

Արտակ Վլադիմիրի Մաղալյանը 1994 թ. ավարտել է Երևանի թիվ 96 միջնակարգ դպրոցը: 1995–1997 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 1997 թ. ընդունվել և 2001 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանը, իսկ 2003 թ. նույն համալսարանի մագիստրատուրան՝ «Արցախի մելիքական տների տոհմածառերը» ավարտական թեզով:

Արտակ Մաղալյանն 2003 թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, նախ՝ որպես կրտսեր գիտաշխատող, ապա՝ գիտաշխատող, ավագ գիտաշխատող: Զբաղվում է Արցախի միջնադարյան պատմության ուսումնասիրությամբ: 2007 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն **«Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ.»** թեմայով, որը նույն թվականին լույս է տեսել որպես առանձին մենագրություն:

Ա. Մաղալյանը յոթ գրքի և ավելի քան **80** պատմագիտական հոդվածների հեղինակ է, որոնց մի մասը հրապարակվել են Ռուսաստանում, Իտալիայում, Ավստրիայում, Լիբանանում, Իրանում, Բելառուսում, Մոլդովայում, ԱՄՆ-ում և Կանադայում: 2006 թ. Վիեննայի «Հանդէս ամսօրեայ» հայագիտական տարեգրքում հրատարակել է Հակոբ Զաքարյան Շուշեցու «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատությունը: 2007 թ. նրա խմբագրությամբ լույս է տեսել **«Շուշին հայոց քաղաքակրթության օրրան»** գիտական հոդվածների ժողովածուն:

Ա. Մաղալյանի գիտական աշխատությունների մյուս ուղղությունը նվիրված է Իրանի նշանավոր տիրակալ Նադիր շահի (1736–1747) գործունեությանը վերաբերող սկզբնաղբյուրների հայտնաբերմանն ու հրատարակմանը: 2010 թ. նրա աշխատասիրությամբ լույս է տեսել **«Նադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները»** գիրքը, որում ընդգրկված են Իրանի XVIII դարի պատմության երկու սկզբնաղբյուրների հայերեն թարգմանությունները: 2024 թ. Թեհրանի հեղինակավոր «Իրանի պատմություն» հրատարակչությունը հայտնի մտավորական Գարուն Սարգսյանի թարգմանությամբ լույս է ընծայել այդ գրքի պարսկերեն թարգմանությունը:

Ակտիվորեն մասնակցում է նաև ադրբեջանցի «պատմաշինարարների» դեմ մղվող քարոզչական պայքարին: Այդ թեմայի շրջանակներում 2012 թ. լույս է տեսել նրա **«Арцахские меликства и меликские дома в XVII–XIX вв.»** ռուսերեն աշխատությունը (Երևան, 2012) և մի շարք հոդվածներ: Այդ մենագրության համար 2013 թ. արժանացել է ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայի, Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և ՀՀ Սփյուռքի նախարարության հայտարարած «Լավագույն գիտական աշխատանք» համահայկական մրցանակաբաշխության I կարգի մրցանակի՝ հասարակական գիտությունների բնագավառում:

2015 թվականից համատեղության կարգով աշխատանքի է անցել նաև Մաշտոցի անվան Մատենադարանի միջնադարյան աղբյուրագիտության բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող:

Ա. Մաղալյանի աշխատասիրությամբ 2016 թ. լույս է տեսել մահմեդական պատմագիր Միրզա Ադիգյոզալ-բեկի **«Ղարաբաղ-նամէ»** աշխատության XIX դ. հայերեն թարգմանությունը:

2025 թ. լույս է տեսել Ա. Մաղալյանի **«Արցախի մելիքությունները XVII–XIX դդ.»** ծավալուն աշխատությունը:

Նա իր մասնակցությունն է բերել նաև «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի հեղինակային և խմբագրական աշխատանքներին: Հայաստանում և արտերկրում մասնակցել է մի քանի տասնյակ միջազգային և հանրապետական գիտաժողովների, հայագիտական և կովկասագիտական միջազգային կոնգրեսների, կլոր սեղան քննարկումների և գիտագործնական աշխատաժողովների:

Ա. Մաղալյանը 2018 թ. ՀՀ պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվել է «Վազգեն Սարգսյան» հուշամեդալով և պաշտպանության նախարարության պատվոգրով:

Ամուսնացած է, ունի երկու երեխա: